

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2014 թվականի

N -Ն

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐՕՐՅԱ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատության երկարօրյա ծառայությունների մատուցման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԿԱՐԳ**  
**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐՕՐՅԱԾ**  
**ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**I. Ընդհանուր դրույթներ**

1. Սույն Կարգով կարգավորում են հանրակրթական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ Հաստատություն) երկարորյա ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները:
2. Երկարորյա ծառայությունների մատուցումը կազմակերպվում է երկարորյա խմբերում (այսուհետ՝ Երկարորյա խմբեր): Երկարորյա խմբերը ստեղծվում են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:
3. Հաստատությունում Երկարորյա խմբերի կազմակերպման հիմնական խնդիրներն են.
  - 1) տնային պայմաններում երեխայի խնամքի և կրթական աջակցության անհնարինության դեպքում՝ Հաստատության ուսումնանյութական բազայի հիման վրա այդ գործընթացների կազմակերպումը,
  - 2) արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացմանն անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
  - 3) կրթության առանձնահատուկ պայմանների և սոցիալական աջակցության կարիք ունեցող սովորողների ներառման սկզբունքի հիման վրա լրացուցիչ կրթական և սոցիալական ծառայություններ՝ մատուցելը,
  - 4) սովորողների սննդի կազմակերպումը:

## II. Հաստատության երկարորյա խմբերի կազմակերպումը

4. Հաստատությունում երկարորյա խմբերը կազմակերպվում են Հաստատության կողմից դրանցում ընդգրկվող սովորողների և նրանց ծնողների պահանջմունքների ուսումնասիրության հիման վրա:
5. Երկարորյա խմբերը համալրվում են ըստ կրթական աստիճանի (տարրական և/կամ միջին դպրոց) կամ զուգահեռ դասարանների:
6. Երկարորյա խմբում ընդգրկվելու համար սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի)՝ Հաստատության տնօրենի անունով ներկայացված դիմումի և Հաստատության պահանջի դեպքում՝ համապատասխան բժշկական փաստաթղթի հիման վրա Հաստատության տնօրենի և սովորողի ծնողի միջև ընթացիկ ուսումնական տարվա համար կնքվում է Հաստատության կողմից երկարորյա ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած օրինակելի ձևին (Հավելված 2) համապատասխան:
7. Երկարորյա խմբերի կազմը, դրանց հետ աշխատող մանկավարժական աշխատողների անվանական կազմը և ուսումնադաստիարակչական աշխատանքների կարգացուցակը հաստատվում են Հաստատության տնօրենի հրամանով:
8. Երկարորյա խմբի աշխատանքի կարգացուցակում նշվում են սովորողների դասապատրաստման, հանգստի, զբոսանքի, էքսկուրսիաների և խմբակներում ընդգրկված սովորողների անվանական կազմը, խմբակի աշխատանքի ժամերը, աշխատանքների իրականացման համար պատասխանատու մանկավարժական աշխատողների և սպասարկող աշխատակիցների անունները:
9. Երկարորյա խմբերի աշխատանքի կարգացուցակում փոփոխություններ կարող են կատարվել Հաստատության տնօրենի հրամանով:
10. Երկարորյա խմբի աշխատանքի կարգացուցակը և խմբի հետ աշխատանքի տարեկան պլանը կազմում են այդ գործընթացում ընդգրկված մանկավարժական աշխատողները, հաստատում է Հաստատության տնօրենը:
11. Երկարորյա խմբի կարգացուցակով իրականացված աշխատանքները, ինչպես նաև խմբում ընդգրկված սովորողների հաճախումները գրանցվում են մատյանում, որի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Մատյանը կնքվում և ստորագրվում է Հաստատության տնօրենի կողմից:
12. Տարրական և միջին դպրոցի Երկարորյա խմբերում ընդգրկված սովորողների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների և սոցիալական աջակցության կարիք ունեցող սովորողների միջին խտությունը 20-25 է (ընդ որում՝ խմբում ընդգրկված սովորողների թիվը չի կարող գերազանցել 30-ը, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը՝ 5-ը):
13. Սահմանված խտությունից պակաս խտությամբ խումբ կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների, իսկ մասնակի կամ լրիվ վճարովի

խմբերում ծնողների վճարումների հաշվին՝ Հաստատության խորհրդի, իսկ ոչ պետական Հաստատության դեպքում՝ հիմնադրի որոշմամբ:

14. Երկարորյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների և սոցիալական աջակցության կարիք ունեցող սովորողներին սույն կարգով սահմանված ծառայությունների մատուցումը կազմակերպվում է պետական միջոցներով՝ հատուկ դպրոցների վերակազմավորման արդյունքում խնայված միջոցների հաշվին: Երկարորյա խմբերում ընդգրկված մյուս սովորողներին երկարորյա ծառայությունների մատուցումը կարող է կազմակերպվել Հաստատության ֆինանսական միջոցների կամ սովորողների ծնողների կողմից կատարվող մասնակի կամ ամբողջական վճարումների հաշվին:

15. Հաստատության Երկարորյա խմբերի ձևավորումն ավարտվում է մինչև ընթացիկ ուսումնական տարվա սեպտեմբերի 10-ը:

16. Երկարորյա խմբի աշխատանքը սկսվում է խմբում ընդգրկված սովորողների դասերի ավարտից՝ սովորողի հանգստի և սննդի պարտադիր կազմակերպման համար հատկացվող առնվազն 1 (մեկ) ժամ տևողությամբ ընդմիջումից հետո:

17. Երկարորյա խմբի ռեժիմը (պարապմունքներ, միջոցառումներ, հանգիստ, սննդի կազմակերպում) չի կարող գերազանցել շաբաթական 30 ժամը:

18. Երկարորյա խմբում դասապատրաստմանը օրական հատկացվում է՝ 1-ին դասարանի երկրորդ կիսամյակում՝ մինչև 1, 2-րդ դասարանում՝ մինչև 1.5, 3-4-րդ դասարաններում՝ մինչև 2, 5-6-րդ դասարաններում՝ մինչև 2.5, 7-9-րդ դասարաններում՝ մինչև 3 ակադեմիական դասաժամ:

19. Հաստատության Երկարորյա խմբերում մանկավարժական աշխատողի մեկ դրույքի լրիվ ծանրաբեռնվածությունը (աշխատանքի ծավալը) չի կարող գերազանցել շաբաթական 30 ակադեմիական ժամը:

20. Երկարորյա խմբերը ըստ դասարանների կամ կրթական աստիճանի կազմավորելիս՝ մանկավարժական աշխատողի համար սահմանվում է վճար տվյալ խմբի համար կարգացուցակով սույն կարգի 9-րդ կետով սահմանված աշխատանքների ակադեմիական ժամերի չափով: Ըստ դասարանների և կրթական աստիճանի (տարրական և/կամ միջին դպրոց) Երկարորյա խմբի հետ աշխատող մանկավարժական աշխատողի վճարի չափը ձևավորվում է սովորողների հետ աշխատակարգով սահմանված փաստացի աշխատաժամանակից (մինչև 30 ակադեմիական ժամ):

21. Երկարորյա խմբի սովորողները կարող են ընդգրկվել Հաստատությունում գործող տարբեր խմբակներում, մասնակցել մրցույթների, օլիմպիադաների և սովորողների համար կազմակերպվող այլ միջոցառումների:

22. Երկարորյա խմբերի սովորողները կարող են օգտվել Հաստատության գրադարանից, ընթերցասրահից, լաբորատորաներից և ուսումնական այլ ռեսուրսներից:

23. Հաստատության երկարորյա խմբերում աշխատողների և սովորողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և սույն կարգով:

24. Հաստատության երկարորյա խմբերի աշխատանքների կազմակերպման, սովորողների կյանքի և առողջության պահպանման, հանգստի ապահովման, խմբերի աշխատանքների կանոնակարգման և վերահսկողության համար պատասխանատու է Հաստատության տնօրենը (տնօրենի տեղակալը):

25. Երկարորյա խմբերի ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման, սովորողների հաճախումների ապահովման համար պատասխանատու են մանկավարժական աշխատողները և սովորողների ծնողները:

## Օրինակելի ձև

### հանրակրթական ուսումնական հաստատության կողմից երկարորյա ծառայությունների մատուցման պայմանագրի

Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատու-  
թյունը՝ (այսուհետ՝ Հաստատություն)

---

Հաստատության լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի

ի դեմս տնօրեն

(այսուհետ՝ Տնօրեն) \_\_\_\_\_ - ի  
անունը, հայրանունը, ազգանունը

Հաստատության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) համաձայն, որպես  
կատարող և ծնողի (օրինական ներկայացուցչի)

\_\_\_\_\_ -ի  
անունը, հայրանունը, ազգանունը

անձնագիր՝ \_\_\_\_\_ , \_\_\_\_\_ , \_\_\_\_\_ ,  
համարը կողը ե՛րբ է տրվել

---

հասցեն

կնքեցին սույն Պայմանագիրը Սովորող \_\_\_\_\_-ին  
անունը, հայրանունը, ազգանունը

երկարորյա ծառայությունների մատուցման մասին:

#### 1. Պայմանագրի առարկան և նպատակը

1.1 Պայմանագրի առարկան և նպատակը համատեղ գործունեություն է՝ ուղղված սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համա-կողմանի օգնություն ցուցաբերմանը, դասապատրաստումներին աջակցմանը, ինքնուրույն սովորելու կարողությունների, ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

## **2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

### **2.1 Հաստատությունը պարտավոր է.**

**2.1.1.** Ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների մտավոր, բարոյական, ֆիզիկական զարգացման համար:

**2.1.2.** Երաշխավորել սովորողի իրավունքների և ազտությունների պաշտպանությունը:

**2.1.3.** Պատասխանատվություն կրել օրենսդրությամբ և «Հանրակրթական ուսումնական հաստատության երկարորյա ծառայությունների մատուցման կարգով» սովորողների կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար և պահպանել սանիտարահիգիենիկ նորմերը, կանոնները ու պահանջները:

**2.1.4.** Ապահովել երկարորյա խմբերում սովորողի դասապատրաստումը, սովորողի հանգստի, զբոսանքի կազմակերպումը, խմբակներում նրա ընդգրկվածությունը և երկարորյա ուսումնադաստիարակչական միջոցառումներին (մրցույթներ, օլիմպիադաներ և այլն) սովորողի մասնակցությունը:

**2.1.5.** Ապահովել երկարորյա խմբերի սովորողի համար Հաստատության գրադարանից, ընթերցասրահից, լաբորատորիաներից և ուսումնական այլ ռեսուրսներից օգտվելու հնարավորություններ:

**2.1.6.** Ապահովել պայմաններ ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթանալու կրթական գործընթացի ընթացքի ու բովանդակության, սովորողի առաջադիմության վերաբերյալ:

**2.1.7.** Ապահովել սոցիալապես անապահով և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների իրավունքների պաշտպանությունը Հաստատությունում՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

**2.1.8.** Կազմակերպել սովորողների պարտադիր սնունդը:

**2.1.9.** Կանխարգելել կոնֆլիկտային իրավիճակները, որոնցում կարող է հայտնվել սովորողը:

**2.1.10.** Կազմել երկարորյա խմբերի ուսումնադաստիարակչական գործունեության կարգացուցակը:

### **2.2. Հաստատությունը իրավունք ունի.**

**2.2.2.** Որոշել աշխատանքների բովանդակությունը, ձևերը և մեթոդները, ընտրել խմբակների գործունեության ուսումնական ծրագրերը և Հաստատության կանոնադրությամբ ու «Հանրակրթական ուսումնական հաստատության երկարորյա ծառայությունների մատուցման կարգով» նախատեսված ուսումնադաստիարակչական գործունեության այլ միջոցներ:

**2.2.3.** Սահմանել երկարորյա խմբերի աշխատանքի ռեժիմը:

**2.2.4.** Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով երկարորյա խմբերում ընդգրկված սովորողի նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

**2.3. Ծնողը (սովորողի օրինական ներկայացուցիչը) պարտավոր է.**

**2.3.1.** Համագործակցել մանկավարժական աշխատողների հետ երկարորյա խմբում իր երեխայի կրթության, հանգստի, սննդի կազմակերպման հարցերում:

**2.3.2.** Հաստատության հետ համատեղ վերահսկել երկարորյա խմբում իր երեխային մատուցված ծառայությունների որակը:

**2.3.3.<sup>1</sup>** Վճարել երկարորյա խմբերի ծառայությունների մատուցման համար Հաստատության կառավարման խորհրդի, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունում՝ հիմնադրի կողմից սահմանված ..... դրամ վճարը:

**2.3.4.** Տեղեկացնել Հաստատության տնօրենին սովորողի հիվանդության կամ բացակայության մասին (դիմում տնօրենի անունով):

**2.3.5.** Տեղեկացնել երկարորյա խմբի մանկավարժական աշխատողին սովորողին տուն ուղեկցող անձի և ժամի մասին:

**2.4. Ծնողը (սովորողի օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի.**

**2.4.1.** Մասնակցել երկարորյա խմբում ընդգրկված սովորողի սննդի համար Հաստատության կողմից սահմանվող վճարի գումարի չափի որոշման քննարկմանը:

**2.4.2.** Մասնակցել երկարորյա խմբերի աշխատանքների վերաբերյալ հարցերով Հաստատության մանկավարժական խորհրդի նիստին:

**2.4.3.** Դիմել հաստատության տնօրինությանը, դասղեկին, մանկավարժական խորհրդին երկարորյա խմբում ընդգրկված սովորողի հետ կապված կոնֆլիկտային իրավիճակները լուծելու նպատակով:

**3. Պայմանագրի գործողության ժամկետը**

**3.1.** Պայմանագիրը կնքվում և ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մեկ ուսումնական տարի ժամկետով:

**4. Պայմանագրի լուծման հիմքերը**

---

<sup>1</sup> Սույն կետում սահմանված վճարի պահանջը չի կիրառվում երկարորյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների և սոցիալական աջակցության կարիք ունեցող, ինչպես նաև ամբողջությամբ Հաստատության ֆինանսական միջոցների հաշվին սովորողներին ծառայությունների մատուցման դեպքում:



4.1. Պայմանագիրը կարող է լուծվել պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով:

4.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.3. Կողմերի նախաձեռնությամբ, երբ կողմը չի կատարել պայմանագրով իր ստանձնած պարտականությունները: Պայմանագրի միակողմանի դադարեցման դեպքում նախաձեռնող կողմը մյուս կողմին պարտավոր է այդ մասին գրավոր ձևով տեղյակ պահել առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման համար՝ գործող օրենսդրությամբ և Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

## 6. Վեճերի լուծման կարգը:

6.1. Կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:

## 7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որից մեկ օրինակը տրվում է սովորողի ծնողին (նրա օրինական ներկայացուցչին) ստորագրությամբ:

7.2. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները իրավական ուժ ունեն, եթե այն ստորագրել են պայմանագրի կողմերը:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Տնօրեն՝

«Ուսումնական հաստատություն»

Անուն՝ \_\_\_\_\_

*ուսումնական հաստատության անվանումը*

Հասցեն՝ \_\_\_\_\_

ՀՎՀՀ՝ \_\_\_\_\_ հեռ. \_\_\_\_\_

Տնօրեն՝ \_\_\_\_\_

*ստորագրություն Կ.Տ. ԱԱ*

### Ծնող (օրինական ներկայացուցիչ)

Անուն՝ \_\_\_\_\_

Ազգանուն՝ \_\_\_\_\_

Հասցեն՝ \_\_\_\_\_

Հեռ. \_\_\_\_\_

Ծնող՝ \_\_\_\_\_

*ստորագրություն ԱԱ*

